

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐՈՒՄ
Արսենյան Մ. Ա.**

Խորհրդարանական մշակույթի կայացման և ժողովրդավարական համախմբան գործընթացներն ունեն փոխադարձաբարձրված բնույթ և պայմանավորում են ժողովրդավարական վարչակարգի որակը: Ժողովրդավարության որակի սուբյեկտիվ չափորոշիչների ուսումնասիրության տեսանկյունից խորհրդարանական մշակույթը ժողովրդավարական անցման գործընթացում դիտվում է և՛ որպես բաղադրիչ, և՛ որպես նախադրյալ: Մի կողմից՝ ժողովրդավարության որակի գնահատման սուբյեկտիվ չափորոշիչները, մյուս կողմից՝ «իշխանության ինդեքս»-ի և «ժողովրդի ուժի ինդեքսի» չափումները ենթադրում են խորհրդարանի գործառնության արդյունավետության չափման հնարավորություն:

Այս տեսանկյունից հեղինակն առաջարկում է մշակել խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման ինդեքս (ԽՄԺԻ)՝ հետխորհրդային երկրների անցումից համախմբում գործընթացների ուսումնասիրությունը որակապես նոր փուլ տեղափոխելու նպատակով:

Բանալի բառեր. խորհրդարանական մշակույթ, ժողովրդավարության որակ, քաղաքական վարչակարգ, սուբյեկտիվ չափորոշիչներ:

Նախաբան: Խորհրդարանական մշակույթը՝ որպես սահմանադրական և քաղաքական մշակույթների փոխազդեցության արդյունք, ժամանակի և տարածության կայուն շարժընթացի մեջ արտացոլում է ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացներում գտնվող պետությունների ժողովրդավարության որակը: Այլևս կարող ենք պնդել, որ լինելով ժողովրդավարական վարչակարգերի թերևս ամենակարևոր չափման գործիքներից մեկը՝ ԽՄ-ն մատնացույց է անում ոչ միայն ներկայացուցչական ինստիտուտների գործունեության մշակութային

մոդելների կերպափոխման էվոյուցիան, այլն ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով չափելի է դարձնում քաղաքացիների ընկալումներն ու կարողունակությունը:

Ժողովրդավարության որակի գնահատման տեսանկյունից սուբյեկտիվ չափորոշիչների հաշվարկման անհրաժեշտությունը դիտարկել են Հ. Դ. Կլինգեման [1, 116-157], Ք. Մայնեն, Բ. Գեսելը [2] և այլք՝ դրա հիմքում դնելով քաղաքական հոգեբանության և քաղաքական մարդաբանության հիմնադրույթները:

Ժողովրդավարական վարչակարգերի որակական չափման տարբեր մոտեցումներ ներկայացնող կազմակերպությունների և մասնագետների հետազոտությունների հիմքում ժողովրդավարական վարչակարգերի որակական գնահատման տեսանկյունից ինստիտուցիոնալ և ընթացակարգային չափորոշիչներից զատ՝ դիտարկում են նաև հետազոտվող տարածաշրջանների քաղաքական մշակույթի զարգացման էվոյուցիան ու անցումային գործընթացների առանձնահատկությունները:

Հետխորհրդային երկրների ժողովրդավարացման ներուժի գնահատման տեսանկյունից՝ սույն աշխատանքը շեշտադրում է *անհրաժեշտ է գնահատման օբյեկտիվ չափորոշիչները հավելել սուբյեկտիվ չափորոշիչներով*, այն է՝ *ժողովրդավարության մասին քաղաքացիների ընկալումներով և վարքային մոդելներով (citizens' perspective)*:

Ժողովրդավարության որակի քաղաքացիական չափման հարցի շուրջ: Ժողովրդավարության որակի գնահատման օբյեկտիվ չափորոշիչների ներքո հաշվարկվում են այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են՝ *սոցիալական կապիտալը, ներառականությունը, հակամենաշնորհային քաղաքականությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, օրենքի գերակայությունը, կուսակցական համակարգը, քաղաքական մասնակցությունը, ազատ ու արդար ընտրությունները և այլն*: Սակայն խնդիրը այն է, որ նշյալ օբյեկտիվ չափորոշիչների և դրանց վերաբերյալ քաղաքացիների սուբյեկտիվ ընկալումների հանրագումարը գնահատել հնարավոր չէ, քանի որ մի կողմից գործ ունենք օբյեկտիվ և սուբյեկտիվ չափորոշիչների միջև պատճառահետևանքային կապի բացակայության, մյուս կողմից՝ երկու անհայտով գծային հավասարման հետ:

Այս տեսանկյունից վառ օրինակ է հանդիսանում «ազատ և արդար ընտրություններ» չափորոշիչը, որից ձերբազատվելու անհրաժեշտությամբ

յանը տարբեր ժամանակներում անդրադարձել էին քաղաքագետներ Խ. Լինցը և Ա. Ստեփանը [3, 22–23], Ֆ. Ֆուկույաման [4], Լ. Դայմոնդը [5, 39–40] և այլք: Նրանց դիտարկմամբ՝ թե՛ ժողովրդավարության աջակիցները (ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ), թե՛ քաղաքական ընտրանին և թե՛ հասարակությունը պետք է խուսափեն «ընտրութենապաշտության մոլորությունից», որը ենթադրում է, թե ազատ ընտրությունները կարող են դիտվել որպես ժողովրդավարության որակի բարձրացման բավարար պայման:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ *ժողովրդավարության մասին քաղաքացիների ընկալում* ասելով՝ բնավ նկատի չունենք քաղաքացիների ընկալումը սեփական երկրում ժողովրդավարության որակի մասին: Սուբյեկտիվ չափորոշիչները պետք է արտացոլեն քաղաքացիների ընկալումները ժողովրդավարության մասին ընդհանրապես և նրանց ներուժը՝ ձևավորել վարքային այնպիսի մոդելներ, որոնք միտված կլինեն պաշտպանել ժողովրդավարությունը՝ որպես «միակ խաղը քաղաքում»:

Այս տեսանկյունից արժեքավոր նշանակություն ունի ժողովրդավարության որակի գնահատման սուբյեկտիվ չափորոշիչների (subjective measurements) հայեցակարգը՝ մշակված գերմանացի քաղաքագետներ Դ. Ֆյուքսի և Է. Ռոլերի կողմից [6, 22–32]: Դ. Ֆյուքսի և Է. Ռոլերի հայեցակարգի գաղափարական հենքը բխում է «քաղաքական մշակույթ» հարացույցի՝ Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի կողմից ներկայացված մոտեցումներից, համաձայն որոնց՝ քաղաքական վարչակարգի կայունությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ կառուցվածքի և մշակութային մոդելների համարժեքությամբ: Հետևաբար, քաղաքացիների սուբյեկտիվ ընկալումները չեն կարող ամբողջությամբ կամ առավելապես լինել «դերային» գործոնների արդյունք, քանի որ նրանց արժեքների, մտածողության և ընկալումների վրա մեծապես ազդեցություն են գործում պատմական հիշողությունը, միջերը, կարծրատիպերը և մշակութային ավանդույթները:

Այս տեսանկյունից ակնհայտ է, որ խորհրդարանական մշակույթի կայացման և ժողովրդավարական համախմբման գործընթացներն ունեն փոխապայմանավորված բնույթ և պայմանավորում են ժողովրդավարական վարչակարգի որակը: Համաձայն «խորհրդարանական մշակույթ»-ի մասին մեր կողմից ներկայացված սահմանումների և մեկնաբանությունների՝ ԽՄ-ը քաղաքական ընտրանու և հասարակության միջև երկխոսությունը դիտում է երկկողմ սոցիալականացման և

վերասոցիալականացման տեսանկյունից, որի դեպքում միայն երկխոսությունը կարող է ձևավորել համագործակցության մշակույթ:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք պնդել, որ խորհրդարանական մշակույթը հենց այն չափորոշիչն է, որն արտացոլում է քաղաքացիների ընկալումները և վարքային մոդելների առանձնահատկությունները ժողովրդավարության էվոլյուցիոն զարգացման գործընթացում: Ավելին, վերոնշյալը բավարար հիմք է տալիս պնդելու, որ խորհրդարանական մշակույթի կայացման տեսանկյունից բնավ կարևոր չէ, թե՛ Սահմանադրությամբ կառավարման ինչ մոդել է ամրագրվել՝ նախագահական, կիսանախագահական, թե՛ խորհրդարանական:

Ժողովրդավարական վարչակարգերում կառավարման մոդելների արդյունավետությունը պայմանավորված է օրենսդիր-գործադիր իշխանության ճյուղերի փաստացի փոխզսպման և հակակշռման մեխանիզմներով, քաղաքական ընտրանիների ներքին ինտեգրման և հասարակության վերասոցիալականացմամբ, ինչպես նաև հանրային կյանքում սահմանադրականության քաղաքագիտական մոտեցման գերակայությամբ: Հենց այդ է պատճառը, որ վերջին տարիներին ժողովրդավարության որակի գնահատման շրջանակներում դիտարկվում է խորհրդարանի գործառութային արդյունավետությունը՝ որպես չափման միավոր համարելով քաղաքացիական ներուժը:

Խորհրդարանի գործառութային արդյունավետության ուսումնասիրությունների շրջանակներում իրականացվող նոր հետազոտությունների հիմքում ընկած հասարակական զարգացման նոր հումանիզմի սկզբունքները փոխակերպում են հանրային իշխանության արժեքաբանությունը: Այս հետազոտությունների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդարանի գործառութային արդյունավետության տեսանկյունից միայն ինստիտուցիոնալ չափորոշիչների հաշվարկման մեթոդաբանությունը թերի է և կարիք ունի համալրման:

Այս համատեքստում ուշագրավ է Ս. Ֆիշի և Մ. Քրյունիգի կողմից մշակված խորհրդարանի լիազորությունների (Parliamentary Powers Index (PPI)) չափման ինդեքսը և դրա հիմքում սահմանադրական փոփոխությունների որակական բնույթի շեշտադրումը, ինչը սահմանադրականության երաշխավորման կարևորագույն բաղադրիչներից մեկն է:

Առաջարկվող մոդելը տեսաբանների կողմից թե՛ տեսական և թե՛ կիրառական տեսանկյունից արժանացել է քննադատությունների՝

համադրման տեսանկյունից սահմանված ցուցանիշների թերի լինելու հետևանքով [7, 389-396]: Ներկայացված քննադատությունների համաձայն՝ խնդիրն այն է, որ դրանք մի կողմից արտացոլում են ինստիտուցիոնալ, իսկ մյուս կողմից՝ վարքաբանական չափումները:

Արդի քաղաքագիտության մեջ գոյություն ունեն խորհրդարանի գործառնության արդյունավետության չափման նաև այլ մոտեցումներ: Այս առումով ուշագրավ է խորհրդարանական վերահսկողության «Ex-Post» (հանրային ֆինանսների ծախսարդյունավետության քննությունը նախապես հաստատված ծրագրերի հետ համադրության շրջանակներում) ինդեքսի հաշվարկումը [8, 119-142]՝ Կանադայում գործող ոչ առևտրային Խորհրդարանական կենտրոնի (Parliamentary Centre) կողմից իրականացված «Measuring Parliamentary Performance-The African Parliamentary Index (API)» [9]: Համակարգային և բազմակողմանի ներկայացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Միջխորհրդարանական միության (Inter-Parliamentary Union (IPU)) և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (UNDP) կողմից համատեղ ներակայցվող Գլոբալ խորհրդարանական զեկույցը (Global Parliamentary Report) [10, 11]:

Թեև վերոնշյալ չափումներն ունեն կարևոր նշանակություն խորհրդարանի գործառնության արդյունավետության գնահատման տեսանկյունից, այնուամենայնիվ փաստենք, որ ժամանակի և տարածության մեջ այդ չափումները ձեռք են բերել ստանդարտացված բնույթ: Այս առումով անհրաժեշտ ենք համարում փաստել, որ խորհրդարանի գործառնության արդյունավետությունը պայմանավորված է խորհրդարանական մշակույթի ստատուս քվոյով, որն արտացոլում է պատգամավորների և խորհրդարանական ինստիտուտների վարքային մոդելները:

Այս համատեքստում ուշագրավ են բրիտանական «Դեմոս» (Demos) կազմակերպության փորձագետների՝ Դ. Լեյթոնի [12], Փ. Սկիդմորի և Կ. Բաունդի [13] կողմից իրականացված հետազոտությունները «իշխանության ինդեքսի» («Power Index») և «ամենօրյա ժողովրդավարության ինդեքսի» («The Everyday Democracy Index») շուրջ: Այս տեսանկյունից իշխանությունը դիտարկվում է որպես կարողություն՝ դրա չափման հիմքում դնելով քաղաքացիների իշխանության գնահատման հետևյալ հինգ գործոնները՝ կրթություն, զբաղվածություն, եկամուտ, կարգավիճակ, առողջություն, հանցագործություններից զերծ

մնալու ազատությունը, ընտրական մասնակցությունը և մարզինալ վերաբերմունքը խորհրդարանի մանդատների առնչությամբ:

Խորհրդարանի գործառնությանին արդունավետության ապահովման տեսանկյունից վերոնշյալ հետազոտությունների հիման վրա իրականացվել է Մեծ Բրիտանիայի վերջին երկու համապետական ընտրությունների (2017-2019) «ժողովրդի ուժի ինդեքսի» (People Power Index) չափումը [14], որի հիմքում ընկած են հետևյալ դրույթները. 1) պատգամավորի *հասանելիությունը* այն ընտրատարածքում, որտեղ առաջադրվել է, 2) պատգամավորի *օրենսդրական սոցիալականացման* մակարդակը, 3) պատգամավորի *պատասխանատվությունը* հանրային օրակարգին հետամուտ լինելու տեսանկյունից:

Եզրակացություն: Ամփոփելով խորհրդարանի գործառնությանին արդունավետության չափման մեթոդաբանությունների առանձնահատկությունները՝ փաստենք, որ վերջին տասնամյակների ընթացքում էապես փոխակերպվել են խորհրդարանի մասին պատկերացումները: Այն այլևս չի դիտարկվում որպես միմիայն օրենսդրական գործառնություն իրականացնող մարմին. խորհրդարանը հանրային իշխանության հումանիզացման, ինչպես նաև հանրային քաղաքականության ներառականության և հասցեականության երաշխավորն է: Իրականացված հետազոտությունների արդունքները ցույց են տալիս, որ խորհրդարանի արդունավետության ապահովման գործում բավարար չեն միայն ինստիտուցիոնալ գործոնները և/կամ Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների քանակը: Դրանք ի չիք են դառնում այն դեպքում, երբ սահմանադրականության և ժողովրդավարական համախմբման գործընթացների միջև տեղի է ունենում փոխկապակցվածության խզում: Հետևաբար, ժողովրդավարության որակի գնահատման սուբյեկտիվ չափորոշիչների (citizens' perspective) հայեցակարգի, ինչպես նաև «իշխանության» և «ժողովրդի ուժի» հայեցակարգային դրույթների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ խորհրդարանական մշակույթը՝ որպես սահմանադրական, ինստիտուցիոնալ և արժեքաբանական գործոնների համակցություն ներքաղաքականության համատեքստում, պետք է ընկած լինի ժողովրդավարական համախմբման գործընթացի գնահատման հիմքում:

Փոփոխվող աշխարհի մարտահրավերներին դիմակայելու և նոր հումանիզմի սկզբունքների կիրարկման շրջանակներում ապագային միտված ռազմավարական զարգացման նկատառումներով՝ *առաջարկում ենք վերոնշյալ մոդելների հիման վրա դիտարկել*

խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման ինդեքսի (ԽՄԺԻ) մշակման հնարավորությունը՝ հետխորհրդային երկրների անցումից համախմբում գործընթացների հիմնախնդիրների հաղթահարումը որակապես նոր փուլ տեղափոխելու նպատակով: Մեր կարծիքով՝ ԽՄԺԻ պետք է ընկած լինի պետական իշխանության ճյուղերի և քաղաքացիների միջև փոխազդեցության ուսումնասիրությունը և դրա ազդեցությունը երկուստեք վարքային մոդելների փոխակերպման վրա:

ԽՄԺ ինդեքսի մշակումը հնարավորություն կտա չափելի դարձնել հասարակության վարքային մոդելների փոխակերպումները էվոյուցիոն ժամանակաշրջանում չափման միավոր դիտարկելով ոչ միայն ընտրական գործընթացները, այլև քաղաքացիների ընկալումները խորհրդարանի, պատգամավորների, կառավարության, պետական կառավարման մարմինների գործունեության շուրջ:

СУБЪЕКТИВНЫЕ КРИТЕРИИ ПАРЛАМЕНТСКОЙ КУЛЬТУРЫ В ОЦЕНОЧНЫХ ИЗМЕРЕНИЯХ КАЧЕСТВА ДЕМОКРАТИИ

Арсенян М. А.

Процессы становления парламентской культуры и демократической консолидации носят взаимозависимый характер и определяют качество функционирования демократического режима. С точки зрения субъективных оценок качества демократии, в процессе демократических преобразований парламентская культура рассматривается и как существенный элемент, и как необходимая предпосылка. Субъективные критерии оценки качества демократии, с одной стороны, и «индекс власти» и «индекс власти народа» с другой, предполагают возможность измерения функциональной эффективности парламента.

В этой связи автор предлагает разработать Индекс демократизации парламентской культуры (ИДПК). Это даст возможность вывести на качественно новый уровень изучение процесса перехода постсоветских государств к демократической консолидации.

Ключевые слова: парламентская культура, качество демократии, политический режим, субъективные измерения.

**SUBJECTIVE CRITERIA OF PARLIAMENTARY CULTURE IN THE
CONTEXT OF EVALUATION MEASUREMENTS OF THE QUALITY OF
DEMOCRACY**
Arsenyan M. A.

The processes of establishment of parliamentary culture and a democratic consolidation have interdependent character and determine the quality of functioning of a democratic regime. From the perspective of subjective measurements on the quality of democracy, parliamentary culture is seen as both an essential element and a necessary precondition in the process of democratic transformations. The subjective criteria for assessing the quality of democracy on the one hand and "power index" and "people's power index" on the other hand assumes the opportunity to measure the functional efficiency of the parliament. In this regard, the author suggests the development of Parliamentary Culture Democratization Index (PCDI). This will give a chance to transfer the study process of the transition to democratic consolidation of the post-soviet countries to a qualitatively new level.

Keywords: parliamentary culture, quality of democracy, political regime, subjective measurements.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Klingemann H.-D. Dissatisfied democrats. The civic culture transformed. Cambridge: Cambridge University Press. 2014. 360 p.
2. Mayne Q., Geissel B. Putting the demos back into the concept of democratic quality// International Political Science Review. 2016. 37(5). P. 634-644.
3. Լինց Խ., Ստեփան Ա. Ժողովրդավարության անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա: Եր.: Կովկասի ինստիտուտ: 2011: 620 էջ:
4. Фукуяма Ф. Мы расслабляемся, как только в проблемных странах проходят первые выборы.
<https://www.golosameriki.ru/a/nedfukuyama/1753454.htmlfbclid=IwAR32RCgCU0LpFpads30OZqh5cmHbCWRvIFyZaYokKyJOmc4osiOd6itvJ4>
(10.10.2021)

5. Diamond L. Breaking Out of the Democratic Slump// Journal of Democracy. 2020. Volume 31. P. 36-50.
6. Diamond L. The Democratic Rollback: The Resurgence of the Predatory State// Foreign Affairs. 2008. Vol. 87, No. 2. P. 39-40.
7. Fuchs D., Roller E. Conceptualizing and Measuring the Quality of Democracy: The Citizens' Perspective.// Politics and Governance. 2018. Vol. 6, Issue 1. P. 22-32.
8. Stapenhurst R., Jacobs K., Eboutou T. Developing an Index of EX-POST Parliamentary Oversight of Public finance.// The Journal of Legislative Studies. 2019. 25 (1). P. 119-142.
9. Measuring Parliamentary Performance-The African Parliamentary Index (API). A Summary Report of the API Round II Assessments in Seven African Countries, 2012. Downtown Ottawa. Parliamentary Centre 2013.
10. Global Parliamentary Report. Inter-parliamentary Union. <https://www.ipu.org/our-impact/strong-parliaments/setting-standards/global-parliamentary-report> (10.10.2021)
11. Power G. The Changing Nature of Parliamentary Representation: Global Parliamentary Report 2012 by IPU and UNDP. <http://archive.ipu.org/pdf/publications/gpr2012-full-e.pdf> (10.10.2021)
12. Skidmore P., Bound K. The Everyday Democracy Index. DEMOS. 2008. https://www.demos.co.uk/files/EDI_all%20chapters.pdf (10.10.2021)
13. Leighton D. The Power Gap: An Index of Everyday Power in Britain. DEMOS. 2009. http://www.demos.co.uk/files/Demos_Power_Gap_Report.pdf?1262628084 (10.10.2021)
14. People Power Index 2019: Methodology. <https://www.change.org/l/uk/the-people-power-index-how-did-your-mp-score> //Game C. The People Power Index: A LEWD Look at How MPs Score. 2020 <https://www.psa.ac.uk/psa/news/people-power-index-lewd-look-how-mps-score> (10.10.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

Արսենյան Մ. Ա. – քաղաքական գիտությունների թեկնածու

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Էլ. փոստ՝ magdaarsenyan@yahoo.com, m.arsenyan@poliscinet.com

Տրվել է խմբագրություն՝ 25.10.2021

Գրախոսվել է՝ 06.01.2022